մեք եմք, որ այդ կարճահասակ մարդդ՝ Նազարէթ ասեն՝ դա զան եհար մեզ եւ վարեց յեկեղեցոյն եւ կ'ասէ թէ ամենայն եկեղեցիք մեր հայրենիք են, ձեզ չենք թողուր։»

Նազարէթ կ'ուրանայ և դատաւորին կու տայ սա նշանակելի բացատրութիւնները. «մեք այսչափ մալ կուտամք թագաւորին ի տարոջն, եւ՛ դոքա զժողովուրդն զապտ կ'ենեն (գրաւել) եւ մեզ եարտում (օգնութիւն) չեն այներ. աշխարհ ամեն աւերեցան, մարդն ի հոս է, դոքա մէկ փող չեն իտար, մեք ուստի՞ց վճարեմք զղապաշան. մեզ այլ զուլմ է։»

Այսպէս «սուտս բազումս յօդելով» դատաւորը խաբել կը փորձէ, հակառակ անոր որ «քահանայիցն շնի հաց անգամ չէին թողուր ջամբել» և մկրտութիւններէն 300 դրամ, պսակներէն երկու ֆլորի և մեռելներէն 4–5 ղրուշ կ'առնէին և «այլ անթիւ յափշտակութիւն» կ'ընէին։

Ասոնք ամէնը ուրացան։

Դարանաղցին այն ատեն առաջ կ'անցնի և Բ. Դուռնէն ստացած պույրուլտուն կու տայ և դատաւորը կարդալէ յետոյ՝ կը պահանջէ «ահտնամէն», և այն ատեն դատաւորը կը սկսի քաղցրութեամբ խօսիլ և Դարանաղցին կը հասկցնէ դատաւորին մի առ մի «ի սկզբանէ ի վեր . . . աղէտն թշուառութեանց եւ զնոցա չարութեան արարն եւ